ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ Ն 236-Ա
« 31 » ՀՈՒԼԻՍԻ 2024Թ.

ՆԱՐԵԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 5-րդ մասերով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի ապրիլի 25-ի թիվ 154-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքները՝ 2024 թվականի հունիսի 12-ի արձանագրությունը և որոշումը, 2024 թվականի հունիսի 17-ի թիվ 01/14-2/3998-2024 ծանուցումը՝ աշխատանքի էական պայմանների փոփոխության մասին, Նարեկ Մարտիրոսյանի 2024 թվականի հունիսի 18-ի Ն/1022-2024 զեկուցագիրը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հուլիսի 26-ի թիվ 235 որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի հաստիքացուցակում կատարված փոփոխությունը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նարեկ Մարտիրոսյանը չի տվել իր գրավոր համաձայնությունը աշխատանքը նոր պայմաններում շարունակելու համար՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի խորհրդական՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության առանձին գործառույթներ համակարգող Նարեկ Մարտիրոսյանին 2024 թվականի օգոստոսի 1-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:
2. Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ–գլխավոր հաշվապահին՝ կատարել վերջնահաշվարկ օրենսդրության համաձայն:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր